Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍ «Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ դասախոսի թափուր տեղի համար՝ հետևյալ առարկաների (մոդուլների) գծով

1. «Ֆրանսերեն լեզու» 290 ժամ (0,4 դրույք) - մեկ դասախոս

Մրցույթը տեղի կունենա 2026 թվականի հունվարի 20-ին ժամը 10.00-ին, Լոռու տարածաշրջանային պետական քոլեջում: Հասցե՝ քաղաք Վանաձոր, Հերացի 11:

2. «Ղեկավարման հմտություն, հոգեբանություն և սպասարկման էթիկետ» 28 ժամ (0,04 դրույք) - մեկ դասախոս

Մրցույթը տեղի կունենա 2026 թվականի հունվարի 20-ին ժամը 12.00-ին, Լոռու տարածաշրջանային պետական քոլեջում: Հասցե՝ քաղաք Վանաձոր, Հերացի 11:

Թափուր աշխատատեղին ներկայացվող պահանջներն են՝

- Հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներ
- Դիմորդը պետք է տվյալ բնագավառում ունենա միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում և (կամ) տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ
- Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար բարձրագույն մասնագիտական կրթությունը և մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է

Մրցույթն անցկացվում է բանավոր հարցազրույցի միջոցով՝ յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին:

Հարցաշարը կազմում է հաստատությունը:

Մրցույթի մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) Դիմում (Ձև 1),

2) Կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճեն),

3) Անձը հաստատող փաստաթուղթ (բնօրինակը և պատճեն),

4) Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5) Ինքնակենսագրություն (Ձև 4),

6) Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճեն),

9) Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճանը, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են 2025 թվականի դեկտեմբերի 27-ից մինչև 2026 թվականի հունվարի 15-ը ներառյալ, աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-16.00:

Տեղեկությունների համար զանգահարել (0322) 4-38-26 հեռախոսահամարով: